

Համա քշից ասկեարը մէջ, ասկեար սկուն կուտուրից,
Էրուն էղաւ, զջանդակներ քշի. կը տանի:

332. Դաւիթ վուր էնու ասկեար կուտուրից, էն ասկեարի
դլխաւուրքեր թել տուըն ուրինց թագեաւուրըն, թէ.— Էն
մարդ զասկեար յըմեն սպանից, մի հաւարին մարդ ճամբսի,
մի յիմտաա¹ ճամբսի:

Թագեաւուր վուր լսից, զայմացաւ:

Էսաց.— Դարձէք յետ, կռիւ միք էնը:

333. Ապա էնոնք փախան, համա Դաւիթ ձեռ չը քեշի.
Ընկեր ի յիտիւքեր, կը կուտուրի.

Կանչի.— Է՛յ, կըսի, մի փախնէք, էլ չըմ սպանի.

Ըծը ձի թագեաւուր նշանց տուէք:

Էնտե կասըն.— Գնա մի քեաղաք, էնտե մի թագեաւուր
կը գնաընիս:

334. Դաւիթն էլ զձին քշի, կերթայ Բաբը Ֆրէնկի քեաղաք,
Մարդ կը ճամբսի.— Առէք ձի թագեաւուրըն գեայ:

Թագեաւուրն ի, կըլնը, կգեայ.

Կը տիսնայ կեօ մէկ մարդ ձիու վերէն նստուկ ի.

Ակօն մարդ օնչ անուն լսիր ի, օնչ տիտիր ի.

Կը վախենայ, դառնայ վուր փախնի:

Դաւիթ ձին կը քշի վերայ, թագեաւուրն կը բռնի.

Կը զարկի, կսպանի:

Մնացողը քեաղքը մէջ վուր մնացիր ի:

335. Դաւիթ էնոնց խամար թագեաւուր կը գնի,

Զաթի ճիւղ մարդեր կսպանի, պոտիկներ տեղ կը գնի:

Կըսի.— Քեանի դիւ ժիր էք, կռիւ միք էրթա:

Զիւր էղա քեաղաք մէկ մէկ ուր տեղ կը գնի,

Զիւր ճիւղ պոտիկ կը ճանչնան,

Դաւթը չիւրս տարն կը թըմըմի:

336. Էնտե կը թամբսի².— Վուր դիւ նեղ կընգնէք ըծը
թիւղթ գրէք, ճամբսէք, իս կգեամ:

Ապա էղա քեաղաք յըմեն Դաւթից կը վախանէն:

Կըսին.— Դաւիթ, չիւր մինք մեռնինք, քիւ խուսք տէնինք:

Դաւիթ կըլնը, կգեայ Սասուն:

Ժ.

337. Մի ասա, Դաւթը մի տղայ իլիր ի, չիւրս տարըն
թմըմիր ի, մօր ասիր ի — «Ըծը խէր չկայ» — Ասիր ի «կայ» — Ասիր
ի. «Իմ խէր յիւր ի» — Ասիր ի. «Գեացիր ի կռիւ»:

1 Թրք.— Օղնութիւն: 2 Թրք.— Պատուիրիլ:

Դաւելի՜ կգեայ, կը խասնի Մշու գաշտ:

338. Մհեր ինչ ի էրիր. մօր մօտէն գեօղաուկ գնացիր,
մէկ ձի խիծիր վուր էրթայ, զխէր գնառնի:

Մհերն ի, ձին կըռւ¹ կը քշի, էրթայ, խասնի խօր:

Կըսի. — Իմ խէր մնակ ի, խասնիմ իմ խօր, չգարկին,
սպանին:

Կերթայ Մշու գաշտը կը խլսցըցի:

Մէկ ճիւղ, անվէրի² սարը մէջ, մարդ չկայ, խալի ի³:

339. Կը տիտնայ մէկ ձիաւուր էդա սարից կգեայ,

Մհեր չը վախանայ, ձին կը քշի յառէջ.

Կերթայ խատ էդա ձիաւուրը կռիւ կէնի.

Ապա վուր Դաւելի՜ խաչի անուն չտայ, չկէրի կռիւ էնի.

Դաւելի՜ կըրշի, տիտնայ մէկ խօրոտ աղէ մի ձիուց կէջի,

Կըսի. — Էդա աղէն զձը չը գտի,

Բէֆահմ⁴ ի, խո զէն չըմ սպանի.

Էջնըմ, դա աղէն տը ըռնըմ, ձիօքիր կապիմ,

Թլիմ ձիու թարկ, տանիմ Սասուն:

340. Դաւելի՜ կգեայ, ձեռ կը թլի, որ զաղէն ըռնի:

Մհեր Դաւթըն կը վերցի, զարկի գետըն.

Սկօն քեամկը վերայ կը դարկի:

Դաւելի՜ գտի ըզինը տսպանի, կըսի.

— Կտըրճ աղայ, դիւ ըզը տսպանիո.

Պա դիւ իմ Մհերի ճուղաը ինչխ տը տաս:

341. Մհեր էն տե կըսի. — Քիւ անուն ինչ ի.

Կըսի. — Իմ անուն Դաւելի՜ ի:

Կըսի. — Վուր դիւ Դաւելի՜ն էր, դիւ գիւր էր գեացիր:

Կըսի. — Գեացիր էր կռիւ խատ յիւրիշ թագեաւուրի:

Կըսի. — Ապա վրէ՛ փախար, էկիր:

Էսաց. — Զէ՛, չըմ փախիր ի, էնու թագեաւուր սպանիր իմ:

Էսաց. — Որ դիւ Դաւելի՜ն իս, քիւ տուն գիւր ի:

Էսաց. — Իմ տուն Սասուն ի:

— Պա քիւ կնկեան անուն ինչ ի, քի տղայ էլիր ի, դիւ
լսիր իս:

Էն գեախ Դաւթըն սըրտն կառնի, էն գեախ կիմանայ,

Կըսի. — Խա, լսիր իմ: — Անուն ինչ ի:

Էսաց. — Անուն Մհեր ի.

Էն գեախ կզուր, խօր ձեռքը կը պազնի.

Յիրարիւ վերայ կը խնդանան, կգեան Սասուն:

1 Թորք = Արագ: 2 Ամայի, անբնակ: 3 Խալի ըլնիլ = Անյայտանալ,
կորչել:

ԺԱ.

342. Խանտիւթ խաթիւնը խէր լսիր ի, թէ Խանտիւթ գնացիր իրիկ էրիր, էնու աղայ իլիր, էնու իրիկ շատ հարըն ի:

Յիւր աղէնիւրուն կըսի. — Ըլեցէք, գինացէք, ըրչկեցէք ձի քիւրուջ հալ ի՞նչ ի. մարդու խմւ կուրորվի, խիւ կան կգեայ, նա խօ ձի քիւրն ի:

343. Աղբէրքեր կը կանգնին, ուրինց հեօղ կէնին,
Կգեան Սառուէն, քիւրուջ մօտ, եօթն աղբէրն էլ:

Խանտիւթ խաթիւն շատ կը խնդանայ.

Էրկու շարաթ դաստիւր շտայ որ էրթան.

Յրմեն օր, սար կայ, Սիւ սար, կերթան նէջիւր կէնին:

344. Աւիւր մէկին Խանտիւթ կըսի Մհերին.

— Մհեր, գիւ էլ կէրին սպանիս վերու ուխտար:

Մհեր կը ծծղայ. — Մարէ՛, կըսի, յրմեն օր իս կոպանիմ.

Ապա, որ իս կոպանիմ, իմ քեռիք հա կը պառկին:

— Մհեր, օրդի՛, որ կոպանիս, ա՛ռ, փախի էրի, իս աւտընամ:

— Մարէ՛, կըսի, իս յէս օր մէ ջիւջ վէրու ուխտար բերիմ:

345. Կըլնըն կերթան Սիւ սար, քեռիք էն տե կը նստըն.

Մհեր կերթայ մէկ խատ ճիւշ վէրու ուխտար կը զարկի,

Որ կոպանի, կառնի, կգեայ:

Քեռիք կրիշիկին Մհեր ուխտար առց գինաց.

Կընկնին յիսեէն, կգեան, կը խասնին, կըսին.

— Մհեր, գիւ մի շիկի, գիւ չըս կէրի:

Կըսի. — Ըծը բան չկայ ձի խիտ, իս կէրիմ շիկի:

Կէնին—չէնին չըն կէրի Մհերի ձեռնէն առնի:

346. Եօթն էլ զվէրու ուխտարը ձեռ կը թլին, վերուն տիրին գետըն: Ապա քեռիքն էլ կըտըրճ մարդ ին:

Մհեր էլ կըռըկի կը հառստի,

Ձեռ կը թլի որ քեռու փողպատին.

Համա մէմէկ կը տիր գետըն.

Որ կը տիր գետըն, չիւր մէջքը կը թաղուը խուղը մէջ:

347. Զվէրու ուխտար կառնը, կգեայ տուն, կը տանը գնը մօր յառէջ: Դաւիթն էլ քնիր ի:

Խանտիւթն էլ կըսի. — Դաւիթ, յըլի վի.

Կը խնդանայ, կըսի. — Դաւիթ, տե՛ս, Մհեր ի՞նչ վիւ ու ուխտար մ'է բերիր:

348. Դաւիթ աչքիր կը բանայ կրիշիկի, կը տիսնի, մէկ զօռ— պա ուխտար մը սպանիր, բիրբի դրիր ի տան մէջ:

կըսի.—Մհեր, քիւ քեռիք յիւր ին.

—Իս վերու ուխտար առք, էկայ տուն.

Իմ քեռիք, ընկեան իմ խոնէն էկին.

Եկինք, է՛, էս ան, քեաղքը գըլեօխ.

Միտ կէնին զվերու ուխտար ձընէ խլէն.

Իս ինչ էրիմ, ձընէ չգադարան,

Իսն էլ ամին մէկ մէ եան շփուտիմ.

Զվերու ուխտար առամ էկամ տուն:

349. Դաւիթ էսաց.—Վա՛յ-վա՛յ, ձեռ զարկից չուքը վերայ,

Խանտիւթ, քիւ աղբէրքիւ սպանիւ ի:

Զէ՛, Դաւիթ զՄհեր ճարպիւր¹ ի, գտի, ինչքամ զախմ² ի.

Խանտիւթ չաւատաց.—Էդա ճիժ ինչդ իմ աղբէրքիւ

տսպանի:

Դաւիթ կըլնը կը վազնի գէմ Մհերի քեռիք.

Խանտիւթն էլ Դաւթը խիտ կերթայ. որ կը մօտանայ,

կըսի.—Դաւիթ, կեօ իմ աղբէրքիւ կը ծծղան:

Զէ՛ որ Մհեր զարկիւ ի գետըն, զէարպեօլ ի,

Բերանքտիւ բացուիւ ի, ատամքտիւ սպտակ կտան:

350. Խանտիւթ գըտի կը ծծղան. Դաւիթ շիւտ կը խասնի,

Ձեռ կը թլը վուր խուղէն դիւռ քեշի.

Կը տիսնայ մեռուկ ի անիւ,

Որ կը թլի, տիսնայ, յըմեն էլ մեռուկ ի:

—Խանտիւթ, կըսի, շիւտ էրի, քիւ աղբէրքիւ յըմեն մե-

ռած ի:

Խանտիւթ կը խասնի, տիսնայ, աղբէրքիւ յըմեն մեռած ի.

Էդա կըլնըն կը դառնան տուն:

351. Դաւիթ կգեայ տուն, կը հաճաստի Մհերի վերայ.

Մէկ շամախ³ կը զարկի Մհերը յերսին, Մհերն ի, ձէն չտայ,

Մէկ էլ կը զարկի, էլի ձէն չտայ Մհեր:

Դաւիթ կըսի.—Իս իմ շամախ էրկըթէ թրին զարկէր,

Շուռ կառնէր, էդա տնաւիւ ի՞նչքան զաղմ ի.

Կը հառստի, մէկ շամախ էլ կը զարկի:

352. Մհեր կըսի.—Խէրէ՛կ, մէկ քի խաթը, էրկուռ քի
խաթը, էրիքին է՛լ ինչ խաթը:

Կըռքի, ձեռ կը թլի խէր.

Կը բռնը զխէրն, կը վերցի զարկի գետըն.

Խէր շիւր մէջք կընկնը, կերթայ խուղը մէջ.

Դաւիթ կանիծի.—Վա՛յ Մհեր,

1 Փորձել: 2 Թրք=Ուժեղ: 3 Թրք. Շամախ=Ոսկտակ:

Աստուծուց կը խնդրեմ, դիւ անմախ ըլնըս.

Քիւ ժառանգ դիւս չըլնը.

Քիւ տեղն էլ քեարը մէջ ըլնը.

Դիւ քիւ աչքեով ախշար չը տիսնաս.

Որ դիւ ախշար տիսնաս, ախշար տաւրիս:

353. Խանտիւթ կը տիսնայ Դաւիթ չուրցաւ.

Ձեռ կտայ վուր զԴաւիթ խանի.

Տիսնայ, մէջք, յըմեն ուսկուր ջարդըուիր ի:

354. Խանտիւթ կը թուղնը զԴաւիթ, կրիշկի դախ Մհեր.

Մհերն էլ չկայ, Մհեր կուրսըուիր ի վերեէն.

Կըլնը զԴաւիթ խանի,

Կերթայ, մէկ մէկ զաղբէրքեր կը բերի.

Տէրտէրքեր, իշխանքաիր կը բերի,

Տեղ կտայ փուրիւ. յըմեն էլ կտայ խուրիւ.

Էդա Դաւթը վուսկիք կը խարճի.

Աղէկ ժամ, պատարագ էտե կէնի, զինքն էլ խաց չուտի.

Կըսի. — Աստուած քեակի Սասուն:

355. Կըռըկի, զիւր ձին կը խիծնի.

Յալա՛, Խո՛յ, դիւր իս, էկայ քի խամար:

Սասուն էն աւիրն էր վուր աւիրուաւ:



Զ Ո Ջ Ա Ն Յ Տ ՈՒՆ

Կ Ա Մ

Ս Ա Ս Մ Ա Յ Ծ Ռ Ե Ր *

(Գ Ե Ա Մ Ա Շ ՈՒ Բ Ա Ր Բ Ա Ն)



Ս Ա Ն Ա Ս Ա Ր ԵՒ Բ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր

Ա.

1. Կըլնի—չըլնի մի խայ թահեաւոր կըլնի. տա մի ախչիկ ունի: Էտ թահեաւորի ախչիկ շատ խօրօտ կըլնի: Աջմու թահեաւորի աղայի աչք կինի Արեւելից թահեաւորի ախչիկան: Աջմու թահեաւորն էլ շատ զօռբա կեղնի խաբար կը զրկի Արեւելից թահեաւորի մօտ, որ քու ախչիկ տը տաս յըմ ** աղին:

2. Մի էրկու տիր ¹ խաբար տը զրկի, կասի.— «Քիւ ախչիկ տու յըմ աղին»: Էն էլ կասի. «Ես խայ եմ, աիւ ոջամ, ես յիմ ախչիկ չըմ ի տայ»:

3. Աջմու թահեաւոր կասի.— Թէ քիւ ախչիկ չտաս եմ աղին, ձե ² յմեն տը մորթեմ:

4. Ախչիկ որ տը լսայ, կը մտածի ինոր ³ վրէն, կասի.— Յիմ տաբաբով էսս յմմէն մարթ տը սպանեն, ինոնց տղեներ տը մընան յեթիմ, ձի ⁴ տանիծեն, վերչ զօռով ձի տը տանեն. աղէկն էն ա, որ ես յըմ կամքէօլ էրթամ, ձի չանիծեն. յըմ խօր թահեաւորու թէն էլ գէնա ⁵ մնայ:

* Վէպի գրի աւանդ Մայր Աթոռի գրաշար Յարութիւն Աւչեանը չունէր քնդճանաչող վերնադիր. իսկ մեր քնտրածի մասին խօսելիք կ'ունենանք յաջադարանում: Բ. Աւչեանին այս վէպը պատմել է Գեաւաշուհ Տեշող զիւղացի 23 տարեկան Եղիազար Յակովբեանը. վերջինս էլ լսել է Մեղանցի մի ծեր մանրավաճառից: Ե. Յակովբեանը վէպս պատմելուց առաջ՝ մէկ-երկու տարի բանոր էր վաղարչապատում:

Ստեփան Աւանայեանց.

** Այս վէպում յըմ. յիմ, յիմ ձեւերի մէջ սկզբնատառ յ-ն պէտք է հնչել զերմաներէն յ-ի եւ մեր ե-ի նման իրրել մի վանկ:

1. Անգամ: 2. Չեղ: 3. Իւր: 4. Ինծ: 5. Գարծեալ, կրկին:

5. Ախշիյն յէլաւ գնաց խօր դիւան, ասաց. — Բաբօ, ընչի՞ կը մտածես:

Խէր պատասխան տուեց ինոր, ասաց. — Ես ինոր խամար կը մտածեմ, Աջմու թակեաւոր ար կեայ մեր թակեաւորութէն տ'առնի, զըմմէն տ'սպանի, կերի ար տանի: Թէ յըմ ախշի՞կ տամ, էն աջամ ա, ես խայ էմ:

6. Ախշիկ ասաց. — Բաբօ, որ յաջամ ար կեայ, զըմմէն տսպանի յըմ սաբաբօլ, աղէկն էն ա, ես էրթամ, թոխ մարթիւ պան չըլնի: Բաբօ, ջուղաբ տու աջմու թակեաւորին, կեայ ձի տանի. ես մինակ մեռնեմ աղէկ ա յըմ խօր, մօր, ախպօր թերէն¹:

Խէր չըր ուղի էտ պան. տեսաւ որ ճար չկայ, ջուաբ յէօրէօսկեց աջմու թակեաւորի մօտ. — Արի քեօ խարս տար: Զըր ուղի տէր, անճարաց իտու:

7. Աջմու թակեաւոր էկաւ խարս տանի:

Ախշիկ կնաց խօր մօտ, ասաց. — Բաբօ, Աջմու թակեաւորին ասա՛, ձի կը տանի, չոկ տեղ մի սարայ շինի, ձի տանի էնտեղ տնի. մէկ տարի մը² ձի չը կեայ, յըմ յերիս չը տեսնայ:

8. — Բաբօ, տիւ էլ մէկ վարթապետ տիր խը ձի, մէկ էլ խտամ³, ես կերթամ. ես ինչ քեզ ասի, աջմու թակեաւորին խնթրի՛, որ նա էն պաներ կատարի:

9. Խէրն էլ ախշիկայ ասածը Աջմու թակեաւորին խնթրելով ասաց: Էն էլ ուղեց էտ պան, իրան խարս տարաւ ուր քեաղաբ, մէ չոկ սարայ շինեց, էնոնց խաց, կերակուր էօրէօսկեց էնտեղ: Աջմու թակեաւորն էլ ասէր էր ինոնց, սարից տիւս չը կեաք:

10. Կէս տարի սարի մէջ մնացին, յետե ջուաբ յէօրէօսկեցին թակեաւորի մօտ, թէ. — Մենք պռնաւոր ենք էսա տեղ, որ չես թողնի տանից տիւս կեանք:

Թակեաւոր ասաց. — Իրաւիւնք ունեն, տիւս կեան, կան կեան:

11. Տռնապաներ իրաւիւնք տուին, տիւս էկան կան կեաւիւ: Թակեաւորի ախշիկն էլ ծով չէր տիւէ, թէ ինչ պան էր. կան էկան խաս բախշի մէջ, տիւս էկաւ, տեսաւ Կապոս ծով: Ծովի պռուկ չը տեսաւ. էտա ցեղ⁴ մտածելով ծովու պերան վե կնաց. կնաց մի քարափ տեղ կայնեց, իրիշկեց, տեսաւ, որ ծովին ձէր չըկայ. նեղացաւ նստեց, ասաց. — Ա՛խ երանի մէ փշուր ճիւր կըլնէր. ես խմէի:

12. Մի քիչ էլ կան եկաւ, քեարերի մէջ ճիւր չը տեսաւ.

1. Փոխարէն, կողմից: 2. Մօտ: 3. Աղախին: 4. Այգալէս:

կրիշկեց ծովի մէջ, տեսաւ մէկ ճոշ քեարքմ կոյ ծովու պռուկ,
մէկ ուտակ ախպիւր էտ քեարից կը թալի, ճիւրն էլ ինոր չորս
պիւլէօր պռնիր էր. էնա ցեղ որ մարթ առանց խալաւ խանելիւ
չէր կեանայ էրթայ էտ յախպիւր ճիւր խմի. ինք ուր չորեր խա-
նեց կնաց էտ յախպիւր ճիւր խմեց, էկաւ: Յետի յետի էկաւ
ուր սարէն նստաւ:

13. Էտ վարթապետ խայի օրէնքի պէս ժամ կասէր, պա-
տարաք կանէր, ախչկան սրփութէն կը տէր: Տարին լմընցաւ, էտ
ախչկայ փորը մեծացաւ: Զուաք խասաւ ինոր կեորէր թակեա-
ւորին, որ քիւ խարս տղով ա:

14. Թակեաւոր կնաց աիւան նստեց, կանչեց վեղրին, թէ.
— Զըս ասի, ըսինա պան ի իլէ: Վեղրին էլ ասաց. — Թակեաւոր
ապրած կենաս, տիւ վարթապետ կը տանիս քիւ խարսու կուշտ.
տիւ չըս գիտի՝ վարթապետ էտա ցեղ պան կանի:

15. Թակեաւորն ասաց. — Վեղրի, ապա ի՞նչ անենք:

Վեղրի ասաց. — Էրկուտն էլ սպանենք: Հրամայեցին Զաւա-
տին¹. — Կնա էրկուտի վիզն էլ կտրի: Զաւատ կնաց սարէն, խարսի
մօտ, ասաց. — Թակեաւոր հրաման արէ, ծէր վիզ տը կտրեմ:

16. Խարսը կասի. — Ծէր թակեաւորին տատաստան չը կոյ,
որ տղով կնկեան վիզ կտրել էրկու կաթլ² ա. թակեաւորին ասա.
տատրէք, մինչև ես իմ տղէն պերեմ, էն ժամանակ տեսնանք
էրեխայ ա, ինչ ա, թող իմ վիզ կտրեն. ինոնք էլ իմանան, թէ
յըմ մեխի ինչ ա:

17. Զաւաթ կնաց թակեաւորի մօտ, ասաց. — Թակեաւոր
ապրած կենայ, ծեր խարս էտա ցեղ ասաց ընծի:

18. Վեղրներ ասին թակեաւորին. — Աղէկ ա ասէր, թոխ
մնայ, ինոր տղէն պիրի, էն ժամանակ վիզ կը կտրենք:

Ժամանակ տվին, մինչև ինոր տղէն պիրի:

19. Ինոր ժամանակ լմնցաւ, տղէնը պիրեց: Էրկու տղայ
պիրեց, վարթապետ տղէնքը կնքեց, մէկի անուընը տրեց Սանա-
սար, միւսին Բաղտասար:

Խապար խասաւ թակեաւորին, որ քիւ խարս էրկու տղայ
պիրեց:

20. Թակեաւոր ասաց. — Զաւատին ասէք, թող էրթայ էնոնց
վիզ կտրի: Զաւատ կնաց խարսի մօտ, ասաց. — Ծեր վեղը տը
կտրեմ:

21. Խարս ասաց. — Ծեր թակեաւորին կանօն, նիղամ³
չը կոյ, որ ծծօր տղէք ինչպէս կը շախէն, որ յըմ վիզ կը կտրեն.

1. Դահիճ: 2. Մարդասպանութիւն: 3. Արդարութիւն. խիղճ:

Թոխ չըմ տղէք մեծանան, իմ վիզը Թոխ կտրի. ես խօ էս տեղից չըմ կենայ փախի:

22. Զաւատ կնաց Ժակեաւորին ասաց: Թակեաւոր կանչեց վեղըին, ասաց.— Ի՞նչ խորհուրթ էր տաք էս պանի խամար:

Վեղըիներ ասացին.— Տաս տարի ժամանակ ինոր, տղէք մեծանան, ինոր վիզ նոր կը կտրենք. նա էս տեղից դո՞ր պիտի էրթայ, Թոխ պանաւորի պէս ներս մնան, սարից ախոս չը կեան:

Բ.

23. Լաճեր էլան խինգը տարեկան, լացին, որ մեզ տարէք տիւս: Լաճեր կեացին տիւս, ճժերի խետ խաղացին, տեսան Կապոս ծով, ապա չըն կի՛տի ինչ պան ա. վազեցին կեացին ծովի մօտ: Իրաքու կապին, թէ էս ինչ աղէկ ցորենի արտ ա: Պռնաւոր են, տիւս չեն էկած, պան չեն աեսած. կեացին ծովու պերան, տեսան որ ճիււր ա. ծովի պերանով կեացին էտ քեարափին մօտեցան:

24. Սանասար ասաց.— Ա՛խպէր, աիւ կայնի էս տեղ, ես ծարաւ եմ, էրթամ էսա յախպիւր ճիււր խմեմ՝ կեամ, դոր տիւ կնայ: Սանասար կնաց էտ ախպիւր, ճիււր խմաւ, էկաւ ախպօր մօտ:

25. Ախպեր տեսաւ Սանասարին, դարմացաւ, ասաց.— Ա՛խպէր, ի՞նչ էլաւ քեզ, որ տիւ էտքան ճոճացար:

Ասաց.— Տիւ է՛լ կնայ խմի արի՛, տիւ էլ ճոճանաս:

Բաղտասարն էլ կնաց էն ճրէն խմաւ, էկաւ ճոճացաւ: Պայց Բաղտասար շատ ծարաւ չէր, ախպօր կէսը խմեց, ախպօր կէս ուժ առեց:

26. Իրիկուն էկան առւն, մէր տեսաւ ինոր տղերըին, չըր ճանչնայ, խարցուց,— Էտ ի՞նչ էլաւ ճեր, որ էտա կիսս ! ճոճացար:

Սանասար ասաց.— Էն ծովի ախպրից ճիււր խմայնք, էսա կիսս ճոճացանք:

27. Մէկ օր էլ կեացին ծովի պերան կան կեալիւ, խալի-վոր մարթմ ըռասա էկաւ ինոնց, ասաց.— Սանասար, արի ես քեզ տանեմ էս ծովու կղզին, էնտեղից քեզ կը տամ Թուր կեծակին, Քուռկու Զաւալին, Զին ու սատաֆին, Գուրդն ի Գօրօզին 2:

28. Սանասարն ախպօրը կառի.— Բա՛ղդասար, տիւ կայնի

1. Զափ. 2. «Գօրօզին»-ի տեղ պատմողը երբեմն «Սամուէլի» էլ էր ասում:

ըստա, ես կերթամ. թէ ես ծովի մէջ խեղաւայ, տիւ էս տեղ
սաղ կը մնաս:

Բաղտասար կասի. — Ա'խպէր, տի'ւ կայնի էս տե, ես կէր-
թամ:

29. Խալիվոր կասի. — Տի'ւ կաց ըստայ, Սանասար թոխ
կեայ խըտ ձի. նա վոժով ա, Գուրզն ու Գորօզին կը պերի:
Խալիվոր կառնի Սանասարին, կէրթայ ծովու կղզին. էնտեղ լա-
լիվոր շանց կտայ Գուռաու Զալալին, Թուր կեծակին, թամբ
սաասֆին, Գուրզն ի Գորօզին:

30. Սանասար կասի. — Պապի, էն կողմից որ էկայնք կղզին,
զատ չըկար խըտ մէ, չը խթուայնք ճրի մէջ, ապա էս կողմից,
էս ծանտը պաներով ինչպէս պտի էրթայնք, որ չը խեխտուէյնք:
Խալիվոր ասաց. — Տիւ ծին խեծի, էտ կործիքներ առ, ճեռ տու
ծի, աչքերըտ խփի, Աստուած կանչի, ես քեզ կը տանեմ տիւս:

31. Խալիվոր պերեց տիւս, ախպօր մօտ: Բաղտասարն խա-
սու իւր ախպօր կըլէօխը պաչեց, ասաց. — Ա'խպէր, քեանի որ
տիւ կերէվեր, ես կըրիշկէի քեզ, եւ տիւ չէրէվացիր, ես նստայ
լացի:

Խալիվոր էս տեղ անյայտացաւ:

32. Սանասար ասաց. — Ինչ անենք, ախպէր, պերենք էս
ծովի պերան, աւաղի մէջ փորենք, էս ծին, էս պաներ խորենք
էս տեղ:

Բաղտասար ասաց. — Լաւ, էս պաներ խորենք, պայց ծինը
խորենք, կը խատնի. էս պաներ խորենք, ծինը տանենք:

էտա պէս էլ արին:

33. Էկան թակեաւորի թաւախանձիւ¹ տիւս կայնան,
թաւախանապետ ինոնց խարցրեց. — Ա'յ տղայ, ինչ մարթ էք:
— Ինոնք ասին. «Խեղճ մարթ էնք»:

Թաւախանապետ կասի. — Զէք ըլնի սէիս²:

Ասին. — կըլնենք, ա'ղա:

Ասեց. — Կիտէք ծի թիմարէք:

Ասին. — խա':

34. Թաւախանապետ տարաւ ինոնց թաւէն, մինչև առա-
ւօտ, առաւօտ էկաւ ասաց. — Վէր կացէք, ծիաներու տեղ շինէք:

Սանասար ցախաւել առեց, Բաղտասար թիակ. ծիանոց
տեղ աւլեցին: Աղէն ասաց. — Ծիաներն թիմարէք:

35. Սանասար ասաց. — Յո'ւր ա քերոց:

Ասաց. — էտ յականատն ա:

Սանատար ծեռ տուեց, որին ծեռ տուեց, էն քերոցներ ծեռաց մէջ էլաւ խող:

36. Աղէն կնաց քէաղարէն տաս խատ էլ առեց իպի: Սանատար որը ծեռ առեց, ծեռաց մէջ էլաւ խող: Կան էկաւ թաւի մէջ, տեսաւ որ մէ ճոճ պղնձից շինուած քերոցի պէս մեծ մի պղնձ տրած էտ տեղ, իային լցրած մէջ ծիյերոց խամար: Փայինը գարտըկեց կետին, աղէնը կնաց:

37. Սանատար առաւօտ էլաւ վե, ծիանոց կետրի խող: Էն պղնձը առեց ծեռ, ծիյեր թիմարի, որի քեամկի վերէն մէկ տիւր պռտեց, կաշինը պլսկուեց, պերեց ոռից խանեց տիւս:

38. Զըմենին էտապէս արաց, ասաց.—Ա'խպէր, կը աեսնաս, որը ես կը թիմրեմ, էնպէս ըռահաթ կը պարկի ինոր տեղ: Բաղտառարն ասաց.—Ա'խպէր, մեր ծին էլ թիմրի:

39. Ասաց.—Կերթամ մեր ծին էլ կը թիմրեմ:

Թիմարեց պրծաւ: էկաւ քնեցին:

Բաղտառար ասաց.—Ա'խպէր, էլի' կնայ, ծիաներ իրիշկի աղէնը չի կեայ մե մի ¹ տիւս:

40. Սանատար կնաց ծիաներ իրիշկի, տեսաւ, որ զըմէն պարկեր էն իրա տեղ, իրար չէն առնի²:

Սանատար էկաւ ախպօրն ասեց.—Ա'խպեր, զըմէն պարկեր էն իրար չէն առնի, մինակ մեր ծին ա կայնէ, կետրի կուտի:

41. Խըլըսուն ³ աղէն էկաւ, տեսաւ ծիյերը սաղ խատիր էն, կանչեց Սանատարին, ասաց.—Սա ինչ ես արէ:

—Աղա, քերոցիր էմ:

—Աստուծ քիւ տուն աւրի. սաղ սպանիր էս ծիյայնք:

—Աղա, խո ես քէ խիանաթ⁴ չեմ. մեր ծին էլ քիւ ծիյերու պէս քերոցիր եմ. աղա, թէ չեո ուզի', յըմ յէս աւուր հախ տաո, ես կերթամ:

42. Նա էլ կնաց թահեաւ որին ասաց, թէ.—Կապէս պամ ա իլէ. ինչ անենք էս մարթկանց խետ, էս մարթերք աթաղհար ⁵ էն:

Թահեաւոր ասաց.—Առաւօտ ինոր կօրօխկենք սար, վիշապի խետ կուի: Էս քեաղաք ճիւր չըկայ. ամէն տարի մէկ ախճիկ կը տանք, էտ վիշապ ուտի, որ մեր քեաղաք չաւրի. մենք էլ ինոր յախու չենք կենայ էրթայ ճիւր պիրի մեղ խամար:

43. Սանատարին ասին.—Էս ախշիկ առէք տարէք, տուէք վիշապին ուտի, ինոր խետ կուէք:

1 Արտաքսի. գուրս մղել: 2 Ձին շարժուում: 3. Հետ լուսուն—խետ լուսուն—խըլըսուն—Առաւօտեան: 4 Թշնամի: 5 Հսկայ, յաղթանդամ, ուժեղ:

Սանատար, Բաղտատար ասին թակեաւորին.— Մենք ընչո՞վ էրթայնք կռիւ :

Թակեաւոր ասաց.— Տիւ կիտէք, թվայնքով ինոր խետ կը-
ռուել չըլնի :

44. Սանատար քեադքի մէջ կան էկաւ, զատ չը տեսաւ,
Բաղտատարին ասաց.— Ինչո՞վ էրթայնք կռիւ : Երթայնք էստեղ,
էս ճոճ տան մէջ էրկու կողմ քեար կայ, առնեյնք էրթայնք.
էրկուսի մէջն էլ ծակ ա, կը մտուցենք մեր թեքեր, ճանբախ
չկարայ¹ կը շինենք, քեաշելով կերթայնք :

45. Ինոնք կեացին քեարեր առին, քեարերի տէրեր կեա-
ցին թակեաւորի մօտ կեանդեատ, թէ մենք էսքան փարա ծախս
արինք, անջախ պիրինք էտ քեարեր, իտոնք կը տանեն կը թա-
լեն սար, էլ մենք չընք կեանայ պիրի :

46. Թակեաւոր ասաց.— Որ տանէք, էլ կը պերէք :

Ասին.— Թակեաւոր, կը տանենք, կը պերենք :

47. Ինոնք առին ախչըկան ու քեարեր չկարայ խմելով
կեացին. խառան սարի կէօխ. էն տեղ, որ ախչըկան կը կապեն,
կասէն,— Կայնի ըստայ, մենք կերթանք, մէկ վիշապի վերև կը
կայնենք, մէկը ներքև :

Ախչիկը մտածեց էս տեղ, թէ ես թողնեմ կը փախնեմ,
թող վիշապ ինոնց ուտի :

48. Տեսան, որ ախչիկը կը փախի, վիշապը չի կեայ, ախ-
չըկան պռնեցին կապեցին։ Սանատար ասաց.— Ես ճամխի ներքև
կայնեմ, տիւ վիրև, ես կը վախեմ, որ վերև կայնեմ, քեար
զանեմ, տիւ յըմ քեար չը կենայ պռնի. ես կը կայնեմ ներքև,
տիւ վերև, համա մուղիյաթ կաց². քեարերը չէրթան ծորի մէջ,
կուրիսեն :

Ասաց.— Շատ լաւ, ախպէր :

49. Մէկ էլ տեսան, որ գըռոց ինգեաւ սարը. իրիշկացին,
տեսան, մէկ ճոճ ջանաւար էկաւ. մի կէօմշի չափ պանցը, խինգ
կէօմշի չապ էրկէն. էկաւ խառաւ ինոնց մօտ։ Բաղտատար քեա-
րըմ էզար, քեարը պռնեց ջանաւարին չիցկեց. կանչեց ախպօր.
«Յըմ քեար պռնի»։ Սանատար էզար ջանաւարի մէ կող կոտրեց.
քեարը չը կնաց ախպօր մօտ։ Մօտխսցան քեարերով կէօխ
ճարտեցին, քեարերը առին, էկան ախչկայ մօտ. արցկրիցին
ախչըկան :

50. Բաղտատար ասաց.— Քեարեր թալենք էնա ծոր, էր-
թայնք։ Սանատար ասաց.— Ա'խպէր, խայեր մեխք էն, չըն կե-

1. Երթարայ, ծխամորճ, դայլան։ 2. Պահպանել, ղզոյշ կենալ։

նայ քեար պիրի, տանէյնը տայնը ինոնց: Քեարերը առին, ախ-
չըկայ խեա էկան տուն:

Ախչիկը ասաց ինոր խօր, ինչ որ տեսաւ:

51. Թաղեաւորը կանչեց ասաց. — Տըղէ՛ք, էն քեարեր պիրի՞ր:
Առին. — խա՛:

— Յո՛ւր ա էն քեարեր:

— Տիւււը արեր էնը, թոխ ինոնց տէրերը կեան տանեն, տե-
ղը անեն, մենք ինոնց տեղ չընք կիտի: Չուր ըստայ պիրիը էյնք,
դօր¹ թոխ ինոնք տանեն:

52. Թաղեաւոր ասաց. — Ինոնք չըն կենայ տանի՛ներս:

Առին. — Բա առաչ ի՞նչպէս էն տարեր ներս:

Ասացին. — Առաչ կէօմէշներ, ծիեր լծեր էն, էա քեարեր
պիրիը էն ինոնց տեղ, նորը ծիթխած շինիր էն:

53. Սանատար ասաց. — Թոխ կեան խըտ ձի, տուներ պա-
նան, տեղերը շանց տան, ես քեարեր կը տանեմ, տեղերը կը
տնեմ:

Տէրերը կնացին Սանատարի խեա, շանց տուն քեարի տեղ.
Սանատար քեարերը տեղ արեց, առուցաւ, էկաւ թաղեաւորի
մօտ:

54. Թաղեաւոր ասաց. — Սանատար, առա՛, ի՞նչ կուզես տամ քե:

Սանատար ասաց. — Պամ չըմ ուղի:

Թաղեաւոր իրեը անքամ խարցնեց. «Ի՞նչ կուզես տամ»:

Սանատար պամ չուզեց թաղեաւորից:

55. Թաղեաւորն ասաց. — Որ պամ չըս ուղի, ախչիյ չըխօ՛ւ
քեօն ա, արի քէ փոսակեմ:

Սանատար ասաց. — Ես մկայ վախտ չունեմ փոսակուել:

56. Էտ տեղից Սանատար, Բաղտատար կաց պարով արին,
էկան Աջամ թաղեաւորի քեաղաք: Ճանախ Սանատար ասաց
Բաղտատարին. — Ա՛խպէր, էն խալիւոր մարթ, որ էկաւ էն կէոր
քեար, էն քէթը³ պան, էն ոսկուէ պան իտու մե, մէյնք չընք
կիտի էտ ի՞նչ պան ա. մուցայնք, չը խարցնեցինք, թէ իտոնք
ընչի՛ խամար ա:

57. Էտա ցեղ կը մտածեն ճանախ, մէկ էլ տեսան մէկ խա-
լիւոր մարթմ էնոնց առչեւ կէրթայ: Սատան էտ մարտիւն: Սա-
նատար ասաց. — Ա՛խպէր, էս էն խալիւորն ա: Բաղտատար ա-
սաց. — Ես չըմ ճանչընայ. կայնի, թէ էն ա, մեզ կը խարցնի,
մենք էլ ինոր կը խարցնենք, թէ էտա պաներ ընչի՛ խամար ա:

58. Սատան խալիւորին, խալիւոր ասաց. — Ա՛յ տղէ՛ք, ընչի՛
կը մտածէք էաքան խոր:

1. Այժմն էլ: 2. Արդէն: 3. Կեռ, թեր:

Սանատար ասաց. — Պապի, տիւ չէ՞ր էտ պաներ տւիր մե:
Ս. ասաց. — Խա՛, որտի:

— Պապի, ապա էտ պաներ ընչի՞ խամար ա, որ տիւ տւիր
ես մե. մենք խորեր էնք աւաղի մէջ: Էն քէթր պանի անուն
լինչ ա:

59 — Որտի, էն քէթր, թուր Կեօակին ա:

— Ս. պա էն ինչ կանեն:

— Էնի երփ էթան կռիւ անեն, կը կապեն ինոնց լերէն,
կերթան կռիւ:

60. Լա՛ւ, պապի, էն կըր պան ինչ ա:

— Էնի Գուրզն ու Գորօզին ա:

— Էն ինչ կանեն:

— Էն էլ ոժով մարթեր կանեն, կերթան կռիւ, կը զանեն
իրարու, կըսպանեն, կը զանեն պերթեր կաւիրեն:

61 — Ս. պա էն սրվտակ ոսկո՞ւն ինչ ա:

— Էն էլ զէն ա, կը տնեո Գուռկու Ջալալի լերէն, կը
խեծնես: Ո՛րտի, ես քեզ էլ պան կը տամ, երփ ամբեր կը մըթ-
նեն, տիւ իմանաք, որ նեզ տեղ էք, էտա ցեղ իրարու հընգատ
կը խանէք, ասաց, էս կասեմ: Պապինը անյայտացաւ:

62. Կեացին Աջմու թակեաւորի քաղաք, մտան ինոնց
մօտ սարէն, տաօր տարին լմընցաւ թակեաւոր օրօխկեց ջան-
լաթներ, էնոնց լիզ կտրեն: Մէրը էլաց, վարթապետին ասաց.
— Իլի՛ պատարաքմ արա, մեզ սրվուլթիւն տու, որ թակեաւոր
մեր լիզն տը կտրի յէս օր:

63. Վարթապետ պատարաք արեց, սրվուլթիւն առին,
ջալատներ էկան. Սանատար, Բաղտատար նոտած քիւրսիներու
լերէն, կասեն, կը ծծղան. մէրը կը լայ:

Ներս մտան ջալատներ, ասաց. — Յէս օր ծեր լիզը տը
կտրեյ՞ք:

64. Մէր ասաց. — Մեր լիզը կտրէք, պայց յըմ տղէներին
ծեռ կերթայ, որ լիզը կտրէք:

Ջալատի մէկը ասաց. — Մեր ծեռն էլ չէրթայ լըր քիւ-
տղէներին, ապա ինչ անեյնք, թակեաւոր ասէ, որ տը կտրեյնք:

65. Մէրը լալէօլ ասաց. — Քիչըմ յետի զրիւցէք, յըմ տղէ-
ներ չը վախենան. մէ քիչ թոխ ծծղան, տիւ էլ նստէք, ըռա-
հաթէք:

— Ա՛խ, ասաց, մե իրաւիւնք չը կայ նստել. շուտ արէք,
էրթանք տիւս, թէ չէ, էս տեղ ծեր լիզ կը կտրենք, արուն կը

Թափի սարի մէջ: Բէօռաց, ասաց. «Շի՛ւտ արէք»: Ծէն ընկեալ Սանասարի աղանջ, տիւռ պաց արեց, աեսաւ մէկ քեանի մարթ Թուրերով կայներ էն սարի մէջ:

66. Ասաց. — Ի՞նչ մարթ էք:

Մէրը ծածուկ աղաչեց ու ասաց. — Յըմ տղէներին չասէք, թէ էկիր ենք, ծեր վիզ տը կտրեցնք: Յըմ տղէներ տանից տիւռ խանենք, ջալատըմ կայնի էն կող, մէկ էն կող, զանեն յըմ տղի վիզն Թռուցեն, որ նա չը աեսնայ, վախենայ: Ապա առաջ ձի ըսպանեցք, նոր յըմ տղերք:

67. Զալատն ասաց. — Դէ՛, իլի էրթանք, արուն չը թափի սարի մէջ:

Սանասար ասաց. — Մարէ, դո՞ր ա՛նէրթայք:

— Մէյ՛ տէրթայնք տիւս, տիկեայնք:

68. — Մարէ ձի ասա, չուր յէս օր տիւ պռնաւոր էր, յէս օր մէկ պան կայ, որ քեզ կը տանեն:

Մէրը չուզեց ասել: Սանասարը չը թողեց էրթայ, ասաց. «Մէ պան կայ ըստայ, որ ձի չըս տսի»:

69. Մօրը սրտին տիպաւ, ասաց. — Ո՛րտի, որ ըռաստ¹ կռւղես, իսոնք Թաղեաւոր յիւրօխկէ, որ մեր վիզ կտրեն:

Ասաց. — Կտրող վո՞վ ա:

— Էս ջալատներ:

Մօտխացաւ ջալատին, բէօռալէօլ ասաց. — Տը՛ւ յիմ վիզ տը կտրես:

Զալատ ասաց. — Թաղեաւոր ի հրաման տուած, որ ծեր վիզ տը կտրեմ:

70. Սանասար մէկ սիւլայ² կպցրեց ջալատի ետեսին, կլէօխը Թռաւ, ջանտակ մնաց կայնուկ. մէկեկներ որ տեսան, թողին փախան, կեացին Թաղեաւորին ասին. — Քիւ թռա մէ սիւլայ էզար ջալատին, կլէօխ Թռաւ:

Թաղեաւոր ասկեար³ յէօրէօխկեց ինոնց վերէն կռիւ:

71. Սանասար տեսաւ, որ ասկեար էկաւ կռիւ անելիւ, ասաց. — Ա՛խպէր, մեյնք ընչո՞վ կռուեցնք:

Բաղտասար ասաց. — Զէ՛ պապին կռիւ անելիւ պան տւեց մե:

Ասաց. — Ախպէր ինոր անուաններ մեր մտէն կեացէ:

— Սանասար, չէ՛ տիւ կրեր էս: Պե կարտայ, ինոր անուաններ չը մօռնանք:

72. Սանասար ասաց — Ախպէր, տի՛ւ իլի, քիչ կռիւ արս՛,

եւ ծի խեծնեմ էրթամ էն ծովու պերան, էն պաներ առնեմ, կեամ կռիւ անեցնք:

Սանասար ծին խեծաւ, կնաց ծովի պերան, էն պաներ պերեւիւ. մէրը տեսաւ էտ առքարներ, էլաց, մտաւ սարէն, տեսաւ Բաղտասարին մէնակ, ասաց ինոր մտիկ մէջ, Սանասար փախէ. էկան մե տը մորթեն:

73. Բաղտասար ասաց.—Մարէ ընչի՞ կը լաս:

—Ես կը լամ, շատ առքեար էկան, Սանասար թողէ փախէ:

Առաց.—Մարէ, չի՞ փախէ, տիւ մի՞ վախենա:

Բաղտասար էլաւ, մինչև իրիկուն կայնեց կռիւ: Իրիկուն քնաւ, ախպէրն էկաւ, տիւռ ծեծեց, պաց արին, էկաւ քընաւ. խլըսուն խեծաւ քուռիւ Զալալին, կապեց սատաֆէ զին, առեց թուրն ու կեծակին, գուրզն ու Գորոզին, կնաց կռիւ: Մինչև իրիկուն առքեարներ ի կէսը սպանեց, խլըսուն Բաղտասարն առեց էտ զէնքեր, կնաց կռիւ: Մինչև կէսորին կռուեց, կռիւ փայտոստ¹ արին, Բաղտասար էկա տուն:

74. Մէկեւ օր, մարթ չէկաւ կռիւ:

Թաղեաւոր ասաց թարիւր² աղասուն.—Կնա կռիւ:

Թաղիւր աղասին ասաց.—Փաթշահ, մեյնք չընք կէսնայ լըր ինոր. քիւ թաղեաւորութեն կը փճացնեն. աղէյն էն ա, չէրթանք կռիւ, մեր առքեարն էլ չըսպանուեն:

Թաղեաւոր մտածեց, տեսաւ որ չարա չը կայ, կռիւ ինոր վնաս ա, ասաց.—Կործ չիւնենք ինոնց խետ:

Գ.

75. Սանասարի քաշութիւն ընկաւ էտա պէօլէօր երկիր: Խապար խասաւ Զինըմաչինայ թաղեաւորի ախշըկան՝ քեառսուն ճող ծամին՝ Գէօհար խանըմին: Էտ թաղեաւորն էտ ախշիկն էր, մարթ չըկար ինոր: Էտ Գէօհար խանըմին քեառասուն խատ փալիվան կէր. էտ Գէօհար խանըմ մէկ թուխտ կրեց խող փալիվանին, ասաց.—Տար Աջմու թաղեաւորի քեաղաք, տու Սանասարին:

76. Փալիվանը իպի տարաւ սարի մէջ, կայնեց Սանասարի, Բաղտասարի կըլխի վերէն, իրիշկաց, էրկուսն էլ քնած էն. չիմացաւ որն էր Սանասար, տրեց Բաղտասարի կըլխի պարցի տակ: Էլան շօրերը խակեան, Բաղտասարը տեսաւ թուխտը՝ կայ պարցի տակ, առեց կարաց:

1. Վերջացուի, կաղմալուծել: 2. Հրամանատար, խմբապետ:

77. Թղթի մէջ կրած. Ձինըմաշինայ թահեաւոր Գէօհար խա-
նըմից. նա ապրել Սանասարին, Բաղտասարին, Սանասարին:
Բաղտասարն ասաց.— Էս ի՞նչ պան ա. էրկու տիր պարել
կիրէ Սանասարին, մէկ տիր ձի: Լաւ. Սանասար ճոճ ախպէրն
ա. յառաջ ինորն ա կիրէ. էն լաւ ա. ինչո՞ւ ա էրկու տիր
կրէ ինոր:

78. Սանասար տոնից էկաւ, պարել տուեց. Բաղտասար չա-
ռեց, ասաց.— Ախպէր, ընչի՞ էս նեղացե:

Ասաց.— Ապա, ինչի՞ Ձինըմաշինայ թահեաւոր, Գէօհար խա-
նըմ, էրկու տիր պարել կիրէ քե, մէկ տիր՝ ձի:

79. Ասաց.— Ախպէր, ըս՛ ինչ անեմ, է՛ն ա կրէ:

— Չէ, ասաց. ես, տիւ տը կռուենք:

— Ընչի՞ կռուենք, մէ տարտակ պարելի խամար:

Ասաց — Խա, կռուենք:

80. Ասաց.— Ախպէր, ես չըմ զանի քե, տիւ զանի ձիկ
ըսպանի:

Ինչքան ասաց, հնարք չէլաւ ախպօր խեա. ասաց.— Էր-
թանք էն չիման տեղ, մէ քիչ խաղամ խեա, ինոր սիրտ իշնի,
կը կեանք տուն:

81. Գուրդ առին, կեացին. Սանասար կայնեց նշանտաշի
կէօխ. Բաղտասար գուրդ առեց, էջար. որտից էջար Սանասա-
րին, որ ըսպանի. գուրդը կընաց կլխու վերէն. Սանասար պռնեց
գուրդ, յետի էթալ չը խասուց ախպօր մօտ. ախպէր առեց՝
մէկ էլ էջար:

82. Սանասար էլ մ՝ էլ պռնեց, մէկ էլ էթալ, վոթի կեաղ
չիմացաւ, գիւրդը էթալ, տիպաւ ախպօր մէկ ոտաց. խելք կը-
նաց, ընկեաւ էտա տեղ:

83. Սանասար շիկեց ախպօր, պերեց էթալ տուն, նստաւ
չուր լոս էլաց:

Լոս պացուաւ, ախպօրը ուշի էկաւ վերէն, վերկացաւ
նստեց:

Սանասար ասաց.— Ախպէր, էտ ի՞նչ էլաւ, տիւ էտա ցեղ
էլար:

Ասաց.— Ոտս ցաւաց, իմ խելք կնաց:

84. Սանասար ասաց.— Ախպէր, տիւ կաց ըստայ, ես կէր-
թամ էտ շան մօտ: Կաց պարէօյ արաց, կընաց: Կընաց, շատ
քիչ Աստուած կիտի, մէկ էլ Ձինըմաշինայ թահեաւորի խող
տիւս էկաւ, տեսաւ մէկ խովիւ:

85. Մի առի, էտա խովիւ էտ թահեաւորի խովիւն ա. էտ
խովիւն էլ փալէվաներից մէկն ա:

Էտ խովիւ կանչեց, Սանասարին ասաց.— Դո՞ր կերթաս:

Առաց.—Կէրթամ Զինքմաշինայ թաղեաւորի քեաղաք:

Առաց խովիւ.—Արի նստի ըստայ, կաթմ կթեմ կի, նոր
Քլի կընայ:

Առաց.—Զէ, ես վառդն եմ, ես կէրթամ:

86. Խովիւ առաց.—Էս տեղէն էրթացող իւրջ չը կայ, ան-
կաթ ուտել չըմ թողնի էրթայ: Զէօռէօլ նստացիւց. մէկ ճոճ
տաշարմ կար ինոր խէտ, որ չորս մարթ կլէօղկներ մէշն, էտ
տաշար ճըլին¹ կաթ արաց, իտի² Սանառարի առչև խացի խետ:
Էտ խովըլու միտին էլ ինչ ա, կուզի ջուրի³ խըլխին, տեսնանք
ինոնց ոժ քեանիմ ա: Էտ կաթ ուտելով⁴ էն կը խասկընայ
ինոնց ոժեր քեանիմ ա: Ով որ էտ ճամխով կերթայ, էտ խովիւ
էտա ցեղ կանի, ապա կը թողնի կերթան Գէօհար խանըմի մօտ.
էն տեղ փալիվաներ արանց կըսպանեն, կլէօլ կը կտրէն, կանեն
պերթ:

87. Խովիւ տաշտ ճլին կաթ որ իտի Սանառարի առչև ու-
տելու, զինք կընաց ոչխարի պիւլէօր կան կեալ: Մէկ փաթ
կան էկաւ, Սանառար քէօռաց.—Խովիւ, արի քիւ կօտ վուրու,
կաց պարօլ, ես տէրթամ: Խովիւ էկաւ, որ տեսաւ Սանառար
կաթ կիրէ, կօտ կործէ, իրը տեղ աէօղաց, առաց.—Սանառար,
կընայ պարօլ, մի՛ վախենա՛. դոր էրթաս մարթ քե չի՛ յաղթի:

88. Սանառար կընաց, խասաւ թաղեաւորի ուրին, քեառ-
սուն փալիվաներ էկան, որ վիզ տը կտրեն:

Սանառար ինոր մտկի մէջ առաց.—Խոյնք էկան յըմ վիզ
տը կտրեն. ապա ես ինչ անեմ:

89. Ես յըմ ծին չը պիրի, յըմ գուրդ չը պիրի, ընչով կու-
անեմ իտոյնց խետ. թուրը մինակ պիրի: Թուրը քեաշեց, մայտան
կայնաւ: Փալիվաներ էկան չորս պտոտ պոնեցին: Գէօհար խա-
նըմ փանջարէն կայնէ, թամաշայ կանի: Թուրը էգար փալիվա-
ներին, վիզ կտրեց. փալիվաներ չըն կեանայ ինոր մօտխըսնայ:

90. Մինչև իրիկուն կուռան, քսան փալիվան ըսպանեց.
կիշերն էլ փալիվաներ կուռ արին, առին.—Կը մթնի, մենք կը
զանենք ինոր կըսպանենք, կիշեր մութն ա: Չուր խըլըսուն
տաս փալիվան էլ ըսպանեց: Խըլըսունից մինչև իրիկուն կուռ
արին, խինգ էլ ըսպանեց: Լէշեր ինգեաւ չորս պիւլըր, չիմանի
վերէն, տրուը կայնեց մէշտեղ:

91. Սանառար մնաց արնի մէջ. արուն Սանառարին պոնեց:
Էլ ոչ Սանառար կէրցաւ արընից տիւս կեայ, ոչ փալիվաներ
կերցան Սանառարին սպանել: Մնացին խինգ փալիվան, չորս
պիւլէօր կան կիկեան, չընկըխնա՛ մօտխըսնայ Սանառարին:

Կուռ էտա ցեղ մնաց:

92. Տառնայնք Բաղտասար ախպօր վրէն:

Բաղտասար էլաւ տիւն, տեսաւ ամբը մթներ ա. էկաւ տուն, ասաց.—Մարէ, ես տէրթամ, ըմ ախպէր նեղ տեղն ա. կամ կըսպանեն, կամ կը մեռնի:

Ասաց.—Տիւ խնչըն կիտիս:

Ասաց.—Մէ խալիվոր մարթմ մե շանց¹ իտու, ասաց.—Եվի էս ամբը կը մթնի, տիւ էրկու ախպէր որ մէկ տեղ չէք ըլնի, իմացէք, որ մէկը նեղ տեղն ա. իրարու ընդատ խասէք: Ես կէրթամ մարէ:

93. Մէրը ասաց.—Կընա՛, տես, քեօ ախպէր ծին, գուրդ պան տարէ:

Կընաց իրիշկաց, էկաւ ասաց.—Մարէ, մէնակ թուրն ա տարէ, ես շուտ տէրթամ, միայ յըմ ախպէր մեռն:

94. Ծին խեծաւ, մոռցաւ, խաց էլ չը կերաւ: Կընաց էն սարի մէջ, էն աթաղհար խովիւ իրիշկաց, տեսաւ, մէկ ծիաւոր էնպէս կը կեայ՝ քեամու պէս, ասաց.—Կա՛յ, չըկայ էս Սանա սարի ախպերն ա: Կընաց առչեւ, ասաց.—Ծիաւոր, արի կաթմ կթեմ կի, նստի ըռըհաթի, չկարէմ խմեյնք, իլի կընա:

95. Բաղտասար ասաց —Սատանայ ես տիւ. յըմ ախպէր միայ մեռն, տիւ կասես, արի կաթ կի. ես կէրթամ:

Խովիւ ասաց.—Հնա՛ր չըկայ, չուր կաթ չուտես, չըմ թաղայ ըս տեղէօլ էրթաս. իլաջ չըկայ:

96. Բաղտասար տեսաւ, որ էտեղ կռիւ կըլնի, նստաւ: Խովիւ էտ կօտը հլին կաթ կթեց, խացի խետ իտի Բաղտասարի առչեւ, զինք կընաց ոչխարի պիւլէօր կան կեալ: Եօթ փաթ կան էկաւ ոչխարի պիւլէօր, նոր Բաղտասար էտ կաթը կերաւ, կօտը կործեց, կանչեց.—Խովիւ, արի՛, կօտ վուրու, ես կէրթամ:

97. Խովիւ էկաւ Բաղտասարին ասաց.—Բաղտասար, քեօ ախպէր եօթ քիւ չափ ոժ ունի. նրան չըլնեմ խալաւ կայնես. կընա, քեօ ախպէր երեսուն խինգ փալիվան ըսպանէ, մնացէ խինգ. էն էլ տիւ կըսպանես. ետ կը տառնէք կիկէք: Մի՛ վախենաք, մարթ չըկենայ ծե էրկու ախպօրը վերէն:

98. Բաղտասար կաց պարէօլ արաց, կընաց մտաւ քեաղաբ: Կընաց մայտան, տեսաւ, որ խինգ փալիվան չորս պիւլէօր կան կըկեան, ախպօր ըսպանեն: Ախպէրն արնի մէջ մնացէ կայնած: Բաղտասարը ծինը քչեց, գուրդըմ էթալ, իրեք փալիվան ըսպանեց. էրկուոր փախան:

99. Կընաց ախպօր մօտ, արուն ախպօր աչքեր պոններ էք, թուր կը դանէր, կանչեց.—Սանասար մըղանի թուր:

Առաց.—Բաղտասար, տի՛ւ ես:

Առաց —Խա՛: Կընաց ախպօրը արընից քեաշեց տիւս, տա-
քաւ լէօղացըեց, ախպօրը աշկերը պացուաւ, ասաց.

—Ո՞ւր ա, խինգ փալիվան էլ մնացեր ա:

—Ես էնոնց ըսպանէր էմ, ասաց Բաղտասար:

Սանասարին տարաւ Գէօճար խանըմի մօտ: Գէօճար խա-
նըմին տուն պերին ինոնց մօր մօտ:

100. Սանասար ասաց.—Ախպէր, էս Գէօճար խանըմ տի՛ւ
առ. էնի կեախն՝ էր ձի տեր ըսպանել:

Բաղտասար ասաց.—Չէ՛, ես ինոր չեմ առնի. էնի էրկու
տիր պարե կիրե քե: Տիւ տառնես, կռիւն էլ տիւ էս արե:
Ես կառնեմ էն թակեաւորի ախշիկ, որը մենք վիշապից աղա-
տեցինք:

101. Մէրը էրկու աղին փոսակեց. Սանասար մենակ էլաւ
էկաւ Արեւելից թակեաւորի մօտ, որ ինոր քեռխէրն էր:

Քեռխէրը եփ տեսաւ ինոր թոռին, շատ խնտացաւ, ասաց.

—Որտի, դէ ասա տեսնեյնք, քեօ մէրը ինչըխ ա, քեօ
ախպէր ինչըխ ա. որ տեղ էր կեացէ, Աջմու թակեաւոր ինչըխ
արաց. խըտ ծե կռիւ արաց, տիւ ուրիշ տեղ կռիւ խըտ ծե ա-
րեր էս:

102. Սանասար, ինչ որ էնոր կլէօխ էկեր էր, ինոր քեռ-
խօր ասաց մէյ-մէկ:

Քեռխէր Սանասարին ասաց.—Կաց մըտ մե, մենք էլ քիւ
վերէն խնդանայնք:

Սանասար ինոնց խաթր չը կոտորեց, մնաց ինոնց մօտ
տարիմ:

Տառնայնք Բաղտասարի վերէն:

Դ.

103. Աջմու թակեաւորի խաներ խորխուրթ արին, որ
ի՛նչ անենք:

Խաներից մէկն առաց.—Սանասար կեացէ, մնացէ Բաղտա-
սար. ինոր ըսպանենք:

Մէկն էլ առաց.—Մենք չընք կենայ ինոր ըսպանի. ինոր
կը կանչենք ըստայ. էնքան կը խմացնենք, կը տանէյնք կը թա-
ւեյնք մըչ էնա փոսին. փուշ, փալաշ ժողվենք վերէն, թոխ մեռնի:

104. Կանչեցին Բաղտասարին խարնիս. ինչքան կինի պիւրին,
մարթ չը խմաւ, զըմէն տուին Բաղտասարին: Բաղտասար սար-
խօշցաւ, տարան թալին փոսի մէչ, փուշ, փալաշ լցին վրէն:

105. Մէկ օր էլ Սանասար տիւս էկաւ ձիւր թափելիւ, ինոր մտիկ մէջ ասաց.— Ես իրիշկեմ յըմ ախպօր ամբ, տեսնայնք, ի՛նչպէս ա: Իրիշկաց, ամբը մթներ էր, էլ լէօս չը կար ամբի մէջ, էլաց, էկաւ տուն: Քեռխէր խարցնեց, ասաց.— Սանասար, ընչի՞ կը լաս:

— Քեռխէր, յըմ ախպօր ամբը մթներ ա. ես տէրթամ:

Ասաց.— Այ ջանրմ, վա՛ղ կաց: Քեօ ախպէր մկայ ըռահաթ նսաէ ինոր մօր մօտ, կը խնդանայ. տիւ էլ մե խնդացիւ:

106. Սանասար քեռխօր չը լսեց, էլաւ էկաւ մօր մօտ:

Մէր ասաց.— Ընչի՞ էտա ցեղ վռաղ էկար:

Ասաց.— Մարէ, յըմ ախպօր ամբ մթներ էր, ես էնոր ապէօվ վռաղ էկայ: Մարէ, ո՛ր ա Բաղտասար:

Ասաց.— Էսօր մէկ ամիս կայ, Բաղտասար Աջմու թահեաւոր կանչեց խարանիս, հըլա չիկե: Դէ նոտի ըռահաթի, խաց կի, քիւ ծինը տանենք զատ տայնք:

107. Ասաց.— Ձէ, խաց չըմ ո՛ւտի, ծիուց էլ չըմ իկեայ տակ, յըմ թուր, յըմ դուռդ պի, ես տէրթամ:

Մէրը ասաց.— Ես չըմ կենայ քիւ դուռդ պիլի, քիւ թուր պիլի:

Ասաց.— Մարէ, տիւ ծիւլ կէօխ պոննի, ես տէրթամ պիլեմ:

108. Մէրը ծիւլ կէօխ պոննեց, Սանասարը կնաց իպի ծինը, խեծաւ, կընաց քեռղքի մէջ, կան էկաւ, տեսաւ, որ ճոչ աեղմ, փուշ, փալաշ էտ տեղն ա. մէ քիչ կայնաւ, տեսաւ, որ կը պանցրանայ, կը ցածրանայ. ծիուց իչաւ, էա փուշերը էթալ տէն, ասաց.— Յըմ ախպէր ըսպանիւր էն, խորիւր էն էտ փշերի տակ. փշեր էթալ դէն, տեսաւ, որ դրուստ ինոր ախպէր փշերի տակ: Ախպէր խանեց, իտի ծկիւ վերէն, տարաւ տուն. պարկացուց շորերի մէջ, ախպօր մէջ շունչ կէր, ասաց.— Էրթամ կռուեմ, վախենամ յիմ ախպէր մեռնի, լեզուի ծէն չառնեմ. մնամ մըտ յըմ ախպէր, տեսնամ ինչըն կըլնի, նոր էրթամ կռիւ: Մնաց մինչև խլըսոււն. սարխօշութիւն էթող ախպօրից, ախպէր էլաւ նստաւ:

109. Սանասար ասաց.— Ախպէր, ի՛նչ էլաւ քե, տիւ էտա ցեղ էլար:

Բաղտասար ասաց.— Ես անոշ քներ էր, տիւ ընչի՞ ձի քընիւց խանիւր վե, էս անոշ շորերի մէջէն:

Սանասար ասաց.— Որ եօ քե չը խանէր վե, տիւ կը մեռնէր:

— Ընչի՞ կը մեռնէր:

— Ապա քեղ խմացրիւր էն, տարած էն, պարկացրած էն էն փոտի մէջ, փուշեր լցիւր էն քիւ վերէն:

110. Ասաց. — Ես պիտի քե, թէ չես աւատայ, էրթայնք փշերի քեօմ, քէ շանց տամ, որտեղ քիւ կըլէօխ, որոնք տրած էն:

Ասաց. — Ա՛պա, որ էտա ցեղ ա, իլի էրթայնք քեաղաք, աւիրենք:

Ասաց. — Ղէ իլի՛:

Էլան խաց կերան, ծին խեծան, թուր, զուռղ առին, կեացին խառին քեաղաք:

111 Բաղտասար ասաց. — Ա՛խպէր, տիւ շատ զախմ¹ էս, ծին, թուր առւ ձի, ես խեծնեմ, ընկընեմ քեաղաքի մէջ, փիղեր կտրեմ. տիւ էլ դուռդով առւ, քեաղաք պիււ. պայց ասպէր, յիշուր² կաց, որ թաղ որ ես կերթամ, էն թաղին մը զանի, չուր ես տիւս կեամ, նոր զար³ էն թաղ: Էտա ցեղ անելով, քեաղաք տուն չը թողին, աւիրիցին, ծուխ մօտեն կարէցին, տառցան էկան մօր մօտ: Մօրը, վարտապետին, խըզամին, ինոնց կընքտէրին առին, տարան Արեւելից թահեաւորի քեաղաք:

112. Թահեաւոր էտա տեղ նորից ինոնց փաակեց: Մէկ տարի մնաց, Սանասար ասաց. — Քեռիսէր, ես մէ պոսն կը խնթրեմ քենէ:

Ասաց. — Ի՞նչ:

Ասաց. — Մէկ աեղ տաս մե, մէյ՛ շինենք մե տուն:

Ասաց. — Որտի, ես տղայ չունեմ. ես կը մեռնեմ, իմ թաւեաւորութին ծե կը մնայ, կըլնի ծե տուն:

113 Ասաց. — Չէ, մէկ աեղ տու մե, թէ չէ կը թողնեմ կերթամ:

— Ապա որ էտացեղ ա, կընայ յըմ խոյի մէջ կան արի, դո՛ր կուզես, էն տեղ շինի քեզ տուն:

Սանասար, Բաղտասար կեացին կան էկան, Սասնայ տեղին խաւան քեար պիրին, տունը շինին:

114. Էկան քեաղքից ուսթայ տարան, տուն շինի:

Ուսթէն աեաւ քեարեր, ասաց. — Ես չըմ կենայ շինի:

Սանասար կընաց քեաղաք, ուրիշ մէկ ուսթայ էլ իպի: Ուսթէն աեաւ ճոճ քեարեր, ասաց. — Սանասար, էս ի՛չըն տը շարենք. ես չըմ կենայ էս քեարեր իրար տայ:

Ապա ո՞վ կենայ:

Ուսթէն ասաց. — Մարթ չըկենայ իրար տայ:

Ապա ի՞նչըն տը շարենք:

— Ես էլ չըմ կիտի:

115. Սանասար ասաց. — Դէ տիւ լարեր կապիր, աեղեր շիտկի, ձի ասա, ես քեար տնեմ իրա տեղ: Էտա ցեղ էլ տուն շինեցին: Տաս տարի էտա տուն անջախ շինեցին: Պայց հաշիւը

չըկեայ, թէ քեանի ուսթայ էտա տան վերէն մեռաւ:

116. Սանասար, Բաղտասար կեացն քեռխօր մօտ, կաց պարով արին, շնորակալ էլան, որ էսքան տարի ինոնց շախէր էր. ինոնց շնած տան ծախսն էլ քեռխէրն էր տւեր:

Քեռխօր, մօր, զըմէնին իրար խէտ առին պերին ինոնց թաժայ տուն շնախաւորելի:

Սանասար ասաց.— Քեռխէր, նոտե՛ք, մինչև յերկուն նոտեցին:

Քեռխէր ասաց.— Էրթանք ժամ աղօթք անենք:

117. Սանասար ասաց.— Քեռխէր, ապա ժամ մօռացիր էմ, չըմ շինէ, որ տեղ աղօթք անենք.

Քեռխօր էլաւ ճամբու տրեց: Թաղեաւոր կընաց ուր ոտրէն:

Սանասար կնաց քեաղաք, ուսթայ պիւրեց, ինչպէս աները շինեց, էնացեղ էլ ժամ շինեց:

118. Էրկու տարի ժամը շինեց պրծաւ, կընաց կայնաւ ճամբի վերէն, ով որ էկաւ, պունեց իպի, ասաց.— Յըմ տան անունը տրէք:

Մարթ չիմացաւ, ինչ ասէր: Քեանի մարթ պերեց էտ տեղ, պերաններ փակուաւ, չիմացան ինչ ասէր:

Մէ օր հրէշտակ էլաւ խալիւոր մարթիւ պէս, էկաւ Սանասարի առջև: Սանասար տարաւ ինորը տունը շանց տուեց, ասաց, — Պապի, մեր տան անունը ի՞նչ կը տընես:

119 Պապին ասաց.— Ես չըմ տեսնայ ծեր տուն քեանիմ ա, որ անունը անեմ:

Ասաց.— Պապի, արի ես քե շլիեմ, մեր տան չորս պիլէօր կան կեամ, տիւ տես, նոր անունը տիր:

Շլիեց տան պիլէօր կան էկաւ:

Ասաց.— Էս Սասուն:

120 Ասաց.— Պապի մեր տան անուն մնաց Սասուն:

Ապա, պապի, մեր ժամու անուն ինչ կը տընես:

— Էրթայնք ժամ տեսնեյնք:

Կընացին ժամ տեսան:

Պապին ասաց.— Ի՞նչքան պոնցր ա. էս էլ Մարութայ Աստուածածին:

Սանասարն ասաց.— Լա՛ւ, պապի, էս էլ էլաւ Մարութայ պանցր Աստուածածին. դէ տիւ էլ կընա:

ԴԱԻԻԹ—ՄՅԵՐ*.

121. Ընցաւ մէկ ժամանակ, Սանատարին Աստուած տուեց մէկ տղայ, Բաղասարին՝ իրեք: Սանատարի տղի անուն Մհէր տրին, Բաղասարի տղեներաց՝ մէկի անուն Յէվան, մէկին՝ Վերդօ, միւսի անուն՝ Վարթան տրին ...:

122. Մհէր խօր ոժ տուեց, էնոր խօր պռնաւորներ, որ պռներ էր Սանայ մէջ, պաց էթող ...:

123. Բաղասարի տղէն էր, պստիկ տղէն, որ անուն Վերդօ էր, ցաւոտ էր, չառաջացաւ: Ճոշ ակապէրն էլ, նա աստղաբաշխ էր, աստղէր կը ճանչնէր, էն էլ կընաց խրտ ուր աստղերի հաշուին. մնաց Սանայ մէջ Մհէր, Յէվան:

124. Մորայ մելիքի կնիկ ... էլաւ Տաւիթ յէօրօխեց Սասուն: Մելիքը ինոր էրկու առաջի մարտեր, մէկի անունը Կիծ-Բաթման, մէկի անուն՝ Քեամուսէ-Քեաշան, ինոնց ասաց. — Կը տանէք Բաթմանայ կէտի վերէն, թալէք ճրի մէջ խեխաուի, տառցէք էկէք ...:

125. Քեամուսէ-Քեաշան, Կիծ-Բաթման ասին. — Տաւիթ, մենք կը խնթրէյնք մե մը թալի կետ, մե քեօ խօր մշակներ էյնք: Քեօ խէր մեռաւ, նոր մեյհ կեացինք Մորա Մելիքի առջև ...:

126. Տաւիթը քընաւ, էրազի մէշ Մարութայ Աստուածածին էկաւ, ասաց Տաւիթին. — Քիւ թիւի վերէն եարայ կըլնի, չըվախենաս, տու տեղեւ, եարէն կը ժրի, եարի տեղ խաշ կըլնի: Էն տեղից մսէ խաշ պատրաստուաւ Տաւիթի աշ թիւին ...:

127. Զին ասաց Տաւիթին. — Մը վախենա, ինոնք խողածին էն, քեանիմ տիւ ըսպանես, չորս ըցկում¹ յըմ ոտների տակ կը տրորվեն ...:

128. Տաւիթը կոյնաւ խորի պերան, թուր քեաշեց ասաց. Կը յիշամ Մարութայ պանցր Աստուածածին, Որ մսէ խաշ պատրաստեց Տաւիթի աշ թիւին.

Որ Տաւիթ թուր թալի, չէրթայ, քիւսն ու քեամին² ...:

129. Տաւիթը կընաց Մշու Աուլթանին խաւնեց, Աուլթանին ասաց. — Ես քե կառնեմ ...:

*. Այս Յիւրը, որ նոյնպէս Յ. Աւետան էր գրի առել, աւելորդ համարեցի ամբողջապէս տպագրութեան տալ, եւ միայն քաղուածք արի տալով կարեւոր հատուածները, նորութիւնները եւ ծննդաբանական տախտակը:

Ատեփան Կանայեանց.

1. Այնքան: 2. Պարսպ տեղ:

130. Մէկ օր Հնդու Եամանար թաղեաւորի ախճիկ՝ Խանդիւթ խանըմ թուխտ կրեր էր Տաւիթին. — Թէ տիւ ինձի յախտեցիր, ինչ կուզես, տը տամ...:

131. Տաւիթ էլաւ լե, ծինը խեծաւ, մարթեր առեց, կընաց կռիւ:

Տաշտի մէջ տեսաւ էր կաթ է սուռն տնդուկ.

Ասաց ինքն իրան. — Էսա ձի ջաբելիւ՝ խամար էն հայնացուցէ:

Թուրը քեաշեց, ասաց. — Կը յիշամ Մարութայ պանցը Աստուածածին.

Մոէ խաչ պատրաստեցին Տաւիթի աչ թիւին,

Որ Տաւիթ թուր թալի էրկաթին

Զէրթայ քիւնն ու քամին.

Թուրը էթալ սուռը կտրեց.

Սուռը կալամ կալամի վերէն կայնեց:

132. Տաւիթ ասաց. — Մեռը կոտորեր Տաւիթին,

Աչքը քեօռներ Տաւիթին, մորը կոտորեր Տաւիթին,

Տաւիթը թուր չը թալեր, էրթեր քիւնն ու քամին:

133. Որ էտա ցեղ ասաց, էլաւ կէօա, ընդեաւ, էտա տեղ:

Մէկ սհաթ մնաց, քեամի էլաւ, կտրած սուռը ընդեաւ տակ:

134. Էն կեախ ինոր կշտի մարտեր ասացին. — Տաւիթ, տիւ ինչի՛ քե անիծեցիր, քիւ կտրած սուռն ընդեաւ տակ:

Ատեցին, — Տաւիթ, ծեր ազկի մէջ Աստուծուց տրուած ա,

Ինչ որ ասեն, կը կատարուի. քե օխնի, էլմ էլ կը ժրես:

125. Տաւիթ ասաց. — Մեռը կանչներ Տաւիթին,

Աչքեր լէօսներ Տաւիթին,

Ատներ տաղէներ Տաւիթին,

Կը յիշամ Մարութայ պարցը Աստուածածին.

Որ լսի Տաւիթի խնթիրքին...:

136. Էրկու տարուց յեաւ Տաւիթին մէկ տղայ կըլնի, անուն կը անեն Մհէր. Տաւիթ եւի կերթայ ուր տղին տեսնայ, կերիշ-կայ աչ ծեռին մէջ մէկ կաթմ աբուռն կայ:

137. Տաւիթը էնտեղ կանխի ինոր տղին, կասի. — Տիւ չորնառ, քեզնից տղայ չըլնի: Կատ ցեղ էլ կըլնի:

138. Տաւիթը կընիկ կառնի, կըպերի Աստուծոյ տուն: Կրկեա Մշու տաշտով որ ընցնի, Մշու Սուլթան կը կեայ առաչ կռիւ կանի: «Էա խաչը», որ յէօրաիւմ արէ, ինոր կը վառի, էլ չը կենայ Սուլթանի խետ կռիւ անի:

139. Պերին էտացեղ արին, կեախալիկ 2 տարան կարմնջի վե-

րէն. Տաւիթը խաբար չունէր: Սամախօռի պղինձ շուռ տուն
Տաւիթի վերէն, Տաւիթի կըլէօն խաշուեց, մեռաւ: Խանդիւթ
խանրմ թողեց կընաց Սասնայ տուն, Տաւիթի ծին, դուռը, թուր
կեծածին, Մշու Սուլթան առեց, տարաւ ինոր օարէն:

140

Արեւիկեց թագաւորի աղջիկ.

Քեանտուն ճող ծամ — Սանասար — Բաղտասար — Թագաւորի աղջիկ

Մհէր — ? Զէնով Յէօվան — Գեօհար, Վերդօ, Վարդան

Թլէօլ — Տաւիթ — Խանդիւթ

Մհէր

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ.

1. Յ. Աւչեանը հրատարակում է «Վաթան և Սասուն» անու-
նով մի պատմութեամբ, որի յառաջարանից մենք քաղում ենք. Զո-
ջանց տան Սասնայ ծոերի վերաբերեալ ժողովրդական աւանդու-
թիւններ, որ նա լսել է սասունցիներէից:

2. Կիլիկիայում խռովութիւն է ծագում. այդ տեղից խոյս է
տալիս «եօթն եղբայրներով մի աղգատոհմ», որ երկար թափառե-
լուց յետոյ գալիս է Մուշ: Երկու եղբայրը գնում են էրզրում,
շատ հարստանում և հռչակ ստանում. սոքա տեսնելով հարստա-
հարող թուրքերին, դաժնեբար շէմում մի շատ մեծ հոր փորեցին
և եկողին այնուհետև հորի մէջ էին գլորում: Մրդոն շարունակ
դաժն առաջ նստած էր լինում և պատահած տաճիկ հիւրին իր
փոքրիկ եղբօրը՝ Գրգոյին յանձնելով՝ ասում էր. «Տղայ, լաօ «թըլ
հորիկ»: Այս անունով էլ կոչւում են եղբայրներն ու իրենց տու-
նը. հորը լցուելուց յետոյ՝ էշերը թարս նալելով և իրենց չարուխ-
ները թարս հագնելով—մի ժամանակ սասնեցոց թարս չարուխ
էին ասում—գալիս են Մուշ, և յետոյ Սասունում մի գիւղ են հիմ-
նում թըլ-հորիկները, որ այժմեան թըլորիկ կամ Տալորիկն է:

3. Այստեղ շինում են մի մեծ փայտածածկ տուն. «Մի օր
գերաններից մէկը ... ուժեղ ճռճոցով կտարուելով՝ քաշ է ընկ-
նում, և ամենքը ... գոռում են.—Սիւն բերէք, սիւն ... Մգրոն,

որ ամենից բարձրահասակն էր, ... ձեռքը վեր բարձրացրած գե-
րանին դէմ տալով՝ ասում է. ես «Մտա-սուն»։ Ամենքն էլ ա-
սում են Մգրոն «մտա-սուն է, մսա-սուն», որից վայրը անուան-
ւում է Մսա-սուն, այսինքն մսէ սիւն, որիցջճագիլ է «Սասուն»։
Այս զրոյցի մասին մինչև իսկ երգում են.

Տունըմ շինինք գիտու բիրան, ջանիման, ջանիման.
Վրէն թալինք ջուխտմ՝ գերան ջանիման, ջանիման.
Մէկն էր խոխի մէկ լը ծիրան ջանիման, ջանիման.
Խոխին կոտրաւ փնաց ծիրան ջանիման, ջանիման.

4. «Թորոսը Կիլիկիոյ իշխանական տոհմերից մէկի շա-
ռաւիղը լինելով՝ Ժե.~դ դարու կէսերում, Լևոն Զ.~ից յետոյ ...
մի խումբ մարդկանց գլուխն անցած՝ վերջին անգամ հրաժեշտ
տալով Կիլիկիային՝ հեռացաւ, եկաւ Սասուն։ ... Թորոսն է կղել
գաւառիս իշխանն ու պետը ... ամենքին էլ հաւասարապէս դա-
տել։ ... իսկ ժողովուրդը ... նրան մինչև այն աստիճան է յար-
գել, որ «Պապ» տիտղոսն է տուել և այն աստիճան սիրել, որ բո-
լորն էլ նրա գլխով են երգում ու ասել—«Մըր պարու հըւադ»,
Մըր խօր պարգա գլոխ»։ Եւ այսպէս երգւում են աւելի Խիզանցիք։

5. Այս աւանդութիւնը թուում է, թէ ուզում է Ջոջանց տան
Սասմայ Ծոերի Քեռի Թորոսին կապել Կիլիկեան Թորոսների հետ.
որ մենք տարիներառաջ նախատեսել ենք։ (Արարատ. ամսա-
գիրք 1907 Դեկտեմբեր, էջ 869. Վաղարշապատ)։

